



ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

# ՂԱՐԱԴԱՂ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ-ՈՒՂԵՑՈՒՅՑ









HISTORICAL ARMENIA

# GHARADAGH

## A MAP-GUIDE TO HISTORICAL MONUMENTS








Տեսարան Արաքս գետից և Քարավազի նոր կամուրջը
The Arax Valley; the new bridge of Karavaz




Վինա գյուղի Թումանյանցների ապարանքը և Ավարսինի բերդն արևելքից
The Tumaniants’ mansion in Vina Village; the fortress of Avarsin from the east

Ղարադաղ գավառը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի հարավային սահմանին՝ Իրանի հյուսիսարևմտյան կողմում: Զբաղեցնում է Արաքս գետի աջափնյա լեռնային հատվածը: Համապատասխանում է Մեծ Հայքի Փայտակարան նահանգի ծայր արևմուտքում ընկած Ռոտ-ի Քաղա գավառին, որը հյուսիսից սահմանակից էր Սյունիքի և Արցախի նահանգներին, ինչպես նաև Վասպուրականի Գողթն գավառին, արևելքից՝ Փայտակարանի Քռեկան գավառին, արևմուտքից՝ Վասպուրականի Բաքրան գավառին, հարավից՝ Ատրպատականին:

Այժմ Արասբարան անվամբ և Ահար շրջկենտրոնով մաս է կազմում Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ատրպատական նահանգի:

Հիշատակվում է Սևասար, Սև լեռ, Սիահ-Կուհ և այլ անվանաձևերով: Ուշ միջնադարում Սյունիքի հարավարևելյան գավառների հետ կազմելով մեկ ամբողջություն՝ գտնվում էր Սյունյաց հոգևոր թեմի՝ հռչակավոր Տաթևի վանքի ենթակայության ներքո: Ըստ Տաթևի թեմի նոր՝ 1692 թ. ցուցակի՝ Ղարադաղի 44 գյուղերը հարկատու էին վանքին: Այդ կարգավիճակը, ամենայն հավանականությամբ, պահպանվում է մինչև 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Նշյալ պատերազմի ավարտից հետո էապես նվազում է Ղարադաղի Դզմար, Հասանով, Մեշափարա, Մինջևան և Քեյվան գավառակներում ոչ միայն հայ բնակչության, այլև հայկական բնակավայրերի քանակը: Ղարադաղի հայությանը մեծապես վնաս է հասցնում 1946 թ. «հայրենադարձությունը»: Գավառը վերջնականապես հայաթափվում է 1970-ական թվականներին:

Ղարադաղն աչքի է ընկնում հայկական նյութական մշակույթի տարաբնույթ հուշարձաններով, որոնք 1970-ական, 2011 և 2018 թթ. համալիր ուսումնասիրվել են ՀՃՈՒ հիմնադրամի արշավախմբերի կողմից:

Սույն քարտեզ-ուղեցույցը հասցեագրում ենք հայրենի գավառի պատմությանը նախանձախնդիր ղարադաղցիներին և պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրությամբ հետաքրքրված հայ և օտար հանրությանը:

---

The district of Gharadagh, which borders the Republic of Armenia and Artsakh (Nagorno Karabakh) to the south, is situated in a mountainous area on the right bank of the river Arax, in the northwest of the Islamic Republic of Iran.

Historically, the current territory of Gharadagh covers the district of Rot-i Kagha lying in the westernmost part of Paytakaran Province, Armenia Maior. It bordered the provinces of Syunik and Artsakh as well as Goghtn District, Vaspurakan Province, to the north; Krekan District, Paytakaran Province, to the east; Bakran District, Vaspurakan Province, to the west, and Atropatene to the south.

Now Gharadagh or Rot-i Kagha is one of the districts of East Azerbaijan Province, Islamic Republic of Iran, by the name of *Arasbaran* (with the district centre in Ahar).

The district has also been called *Sevasar*, *Sev Ler*, *Siah-Kuh*, etc. In the late Middle Ages, the district was within the jurisdiction of the diocese of the renowned monastery of Tatev as one of the southeastern districts of Syunik Province. According to a list of estates belonging to Tatev Diocese, made in 1692, 44 villages of Gharadagh paid taxes to the monastery.

Most presumably, Gharadagh preserved this administrative status until the Russian-Persian war of 1826 to 1828. Afterwards, the Armenian population was considerably reduced in the sub-districts of Dzmar, Hasanov, Meshapara, Minjevan and Keyvan; moreover, even the number of Armenian-inhabited places decreased in the district in general.

The Armenian population of Gharadagh was further reduced after the “repatriation” of 1946. The district was completely deprived of its Armenian inhabitants in the 1970s.

Gharadagh has a wide variety of monuments of Armenian material culture which were thoroughly studied by the expeditions of Research on Armenian Architecture (RAA) Foundation in the 1970s, in 2011 and 2018.

This map-guide is intended for people coming from Gharadagh and all those—Armenians and foreigners—who are interested in studies of historical and cultural monuments.

ISBN 978-9939-843-72-8

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
www.raa-am.org, www.armenianarchitecture.org, raayer@sci.am







Ղարադաղի ուսուցչական կազմը և գավառի լեռները
The teachers of Gharadagh; the mountains of the district



Ուշնեպին գյուղը հյուսիս-արևելքից և Շահ Աբասի իջևանատունն արևմուտքից
Oushnepin Village from the northeast; the caravanserai of Shah Abbas from the west



Հատված Սղըն գյուղի գերեզմանոցից և Արմեն Հախնազարյանը Խանագահում
A partial view of the cemetery of Seghen Village; Armen Hakhnazarian in Khanagah



Վինա գյուղի աշակերտուհիները ուսուցչի հետ և Քոռդաշտի բերդն արևմուտքից
Some pupils and their teacher of Vina Village; the fortress of Kordasht from the west

# ՂԱՐԱԴԱՂ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

